ՀՀ ԿԳՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»ՊԵՏ.ԿԱՌ.Հ.04

ՔԱՐՏ 070002:007992

ՀԱՍՑԵ Ք.ԵՐԵՎԱՆ, ԿՈՄԻՏԱՍԻ պող., շ.37

ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների հաշվառման որակը բարելավելու եվ հնարավոր սխալմունքներից խուսափելու նպատակով "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲ ընկերության /այսուհետ Ընկերություն/ կողմից հանրային (բացառությամբ բնակչության) բաժանորդների համար ըստ յուրաքանչյուր Քարտի "Արդշինբանկ" ՓԲ ընկերությունում բացվել է անհատական բանկային հաշվեհամարներ:

Բացված բանկային անհատական հաշվեհամարը նույնականացված է բաժանորդի Քարտի համարի հետ եվ այն արդեն իսկ նշված կլինի սույն թվականի մարտ ամսվա ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց Ընկերության կողմից դուրս գրվող վճարային փաստաթղթում (հարկային հաշիվներ,հաշվարկային փաստաթուղթ):

Այսուհետ ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց վճարումները անհրաժեշտ է կատարել սույն թվականի մարտ ամսվա դուրս գրված վճարային փաստաթղթում նշված հաշվեհամարին, հակառակ դեպքում այն կհամարվի չվճարված եվ կառաջացնի համապատասխան իրավական հետեվանքներ:

Հետագա անճշտություններից խուսափելու նպատակով առաջարկում եմ Ձեր հաշվառման համակարգերում (հաշվապահական ծրագրերում) նշված,սակայն արդեն իսկ փակված հաշվեհարները փոխարինել նոր հաշվեհամարով:

"ՀԷՑ" ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ
"Կենտրոն" տարածքային համակարգման ... Դ. Ղազինյան

"...05" ապրիլ 2016թ.